«ԱՆՄՈՌ» ՓԲԸ
Աշխատանքային պայմանագրերի
Ընդհանուր պայմաններ

Սույն հավելվածը (այսուհետ նաև՝ Հավելված) հանդիսանում է «ԱՆՄՈՌ» ՓԲԸ (Գործատուի) կողմից՝ ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգում «ԱՆՄՈՌ» ՓԲԸ աշխատողների հետ (յուրաքանչյուր աշխատողի հետ առանձին) կնքվող աշխատանքային պայմանագրի բաղկացուցիչ մասը:

Սույն հավելվածով սահմանվում և կարգավորվում են Գործատուի և աշխատողի միջև կնքվող աշխատանքային պայմանագրի այն պայմաններն ու դրույթները, որոնք ուղղակիորեն չեն ներառվել ՀՀ Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով գեներացվող պայմանագրի համապատասխան բաժիններով և հոդվածներով:

I. Եզրույթներ և սահմանումներ

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան բխում է սույն հավելվածի կոնկրետ դրույթի համատեքստից, եզակիով օգտագործված բառերը ներառում են նաև հոգնակին և հակառակը:

2. Սույն հավելվածի տեքստում կիրառված՝

2.1. Սույն հավելվածի բաժինների (հոդվածների) վերնագրերը ներառված են միայն հնարավոր հղումների մատչելիության համար և չեն կարող ազդել Պայմանագրի դրույթների մեկնաբանության վրա:

2.2. Հղումն այլ փաստաթղթի ներառում է այդ փաստաթուղթը գործող խմբագրությամբ՝ բոլոր փոփոխություններով և լրացումներով:

3. Սույն հավելվածում օգտագործվող ներքոհիշյալ եզրույթներն ու հասկացություններն ունեն հետևյալ իմաստը (մեկնաբանությունը), եթե այլ բան չի սահմանվել Պայմանագրի այլ դրույթներով կամ չի բխում համատեքստից:

3.1. **Օրենսդրություն** - Հայաստանի Հանրապետության օրենսգրքեր, օրենքներ և այլ նորմատիվ իրավական ակտեր:

3.2. **Աշխատանքային օրենսդրություն** – Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք և Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր:

3.3. **Պայմանագիր** – Գործատուի և Աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագիր, ներառյալ Պայմանագրի բոլոր հավելվածները:

3.4. **Գործատու** – շահույթ ստանալու նպատակ հետապնդող իրավաբանական անձ, որը հանդիսանում է Պայմանագրի կողմ:

3.5. **Աշխատող** – Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ մտնող (գտնվող) անձ, որը հանդիսանում է Պայմանագրի կողմ:

3.6. **Ընկերություն** – նույն ինքը Գործատուն:

3.7. **Աշխատանքային (ծառայողական) գործառույթներ** – Աշխատողի աշխատանքային գործառույթներ, լիազորություններ, իրավունքներ և պարտականություններ, որոնք սահմանված են Պայմանագրի համապատասխան դրույթներով կամ Պայմանագրի բաղկացուցիչ մասը կազմող № 4 հավելվածով:

3.8. **Հանձնարարություն** – Աշխատողի անմիջական ղեկավարի և (կամ) Գործատուի կողմից համապատասխան լիազորություններով օժտված անձի բանավոր և (կամ) գրավոր պահանջ, որի կատարումը պարտադիր է Աշխատողի համար:

3.9. **Հանձնարարության պատշաճ կատարում** - Աշխատողի կողմից՝ իր անմիջական ղեկավարի և (կամ) Գործատուի կողմից համապատասխան լիազորություններով օժտված անձի Հանձնարարության կատարում՝ դրանով սահմանված պահանջների պահպանմամբ և (կամ) դրանով ծրագրված արդյունքին հասնելով:

3.10. **Վստահության կորուստ** – իրավիճակ, երբ փաստական հանգամանքների հիման վրա (դրանց զարգացման արդյունքում) Գործատուի մոտ ձևավորվում է կարծիք այն մասին, թե Աշխատողի գործունեությունը հակասում է Գործատուի շահերին:

3.11. **Գերակայության սկզբունք** - Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձի (Աշխատողի) վարքի հիմնական մոդել, համաձայն որի Գործատուի շահերը դասվում են ավելի բարձր, քան Աշխատողի անձնական շահերը:

3.12. **Գործատուի շահերին սպառնացող վտանգ** – Իրավիճակ, հանգամանքներ, փաստեր, որոնք և (կամ) որոնց զարգացումը կարող է հանգեցնել Գործատուի կողմից ակնկալվող շահույթի նվազմանը և (կամ) այլ նյութական վնասի և (կամ) անցանկալի հետևանքների:

3.13. **Մրցակից** - Առևտրային կազմակերպություն, որը գործում է Գործատուի գործունեության ոլորտում և արտադրում (առաջարկում է) ապրանքներ (ծառայություններ), որոնք նույնական են Գործատուի կողմից առաջարկվող ապրանքներին (ծառայություններին):

3.14. **Վարձատրություն** – Պայմանագրով, Գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով նախատեսված Աշխատանքային գործառույթներն ու Հանձնարարությունները որոշակի ժամանակահատվածում պատշաճ կատարելու համար Գործատուի կողմից Աշխատողին վճարվող գումար:

3.15. **Աշխատավարձ** - Պայմանագրով նախատեսված աշխատանքները **փաստացի** կատարելու դիմաց Աշխատողին վճարվող հատուցում, որը ներառում է Հիմնական աշխատավարձը և Գործատուի կողմից Աշխատողին՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց տրված Լրացուցիչ աշխատավարձը:

3.16. **Հիմնական աշխատավարձ** - Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար սահմանված վարձատրություն:

3.17. **Լրացուցիչ աշխատավարձ** - Հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող Հավելումներ, Հավելավճարներ, Լրավճարներ և Պարգևատրումներ:

3.18. **Հավելում** - Հիմնական աշխատավարձի նկատմամբ՝ Պայմանագրով, Գործատուի ներքին իրավական ակտով սահմանված դեպքերում ու չափերով հաշվարկվող լրացուցիչ վարձատրություն, որը վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար:

3.19. **Հավելավճար** - Հիմնական աշխատավարձի նկատմամբ՝ Պայմանագրով, Գործատուի ներքին իրավական ակտով սահմանված դեպքերում ու չափերով հաշվարկվող լրացուցիչ վարձատրություն, որը վճարվում է որակավորման (դասային, դիվանագիտական, գիտական աստիճան, կոչում և այլն), աշխատանքային ստաժի համար:

3.20. **Պարգևատրում** - Պայմանագրով, Գործատուի ներքին իրավական ակտով սահմանված կարգով և չափերով հաշվարկվող, աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության,

ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար ամսական, եռամսյակային, կիսամյակային պարբերականությամբ կամ մեկանգամյա վճարվող վարձատրություն:

3.21. **Լրավճար** - Պայմանագրով, Գործատուի ներքին իրավական ակտով նախատեսված դեպքերում ու չափերով հաշվարկվող՝ Աշխատողին վճարվող ցանկացած ձևի այլ վարձատրություն, բացի Հիմնական աշխատավարձից, Հավելումից, Հավելավճարից և Պարգևատրումից:

4. Սույն հավելվածում օգտագործվող այլ եզրույթներն ու հասկացություններն ունեն այն իմաստը, ինչ սահմանված է Աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն հավելվածով կամ Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

II. Ընդհանուր դրույթներ

5. Պայմանագիրը կարգավորում է Գործատուի և Աշխատողի միջև աշխատանքային իրավահարաբերությունները:

6. Աշխատողի հետ աշխատանքային իրավահարաբերությունների մեջ մտնելով Գործատուն նպատակ է հետապնդում Պայմանագրով (ներառյալ՝ Պայմանագրի հավելվածները) սահմանված կարգով ու պայմաններով՝ օգտագործելով Աշխատողի կատարած աշխատանքը, հասնել Գործատուի արտադրական և այլ պլանների կատարմանը և Գործատուի համար համապատասխան շահույթի ստացմանը:

7. Պայմանագրի համաձայն և Աշխատողի Աշխատանքային (ծառայողական) գործառույթների շրջանակներում (պայմաններով) Աշխատողը ներգրավվում է Գործատուի կողմից իրականացվող աշխատանքների կատարմանը, այդ թվում՝ Գործատուի համապատասխան գործունեությանը:

8. Պայմանագրի գործողության ընթացքում և Պայմանագրի համաձայն ծավալվող գործունեության շրջանակներում Աշխատողն անմիջականորեն ենթարկվում է ***Գործատուի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին և Գործատուի գործող վարչական (վարչակազմակերպչական) կառուցվածքով այլ վերադաս պաշտոնատար անձանց***:

9. Աշխատողի աշխատանքի հիմնական վայր հանդիսանում է Գործատուի ներքին իրավական ակտով հաստատված՝ Գործատուի վարչական (վարչակազմակերպչական) կառուցվածքով նախատեսված համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման տեղակայման վայրը:

10. Գործատուի և Աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունների ծագումն ու փոփոխումը՝ Աշխատողին աշխատանքի ընդունելն ու այլ աշխատանքի փոխադրելը, ինչպես նաև Պայմանագրի լուծումը և (կամ) աշխատանքից ազատումը կատարվում է Պայմանագրի, ինչպես նաև Պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու մասին համաձայնագրի հիման վրա: Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Գործատուի և Աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունների ծագումն ու փոփոխումը ձևակերպվում է Գործատուի անհատական իրավական ակտերով:

11. Պայմանագրով նախատեսված աշխատանքը հանդիսանում է Աշխատողի ***հիմնական*** աշխատանքը: Պայմանագրի գործողության ընթացքում Աշխատողին չի թույլատրվում առանց Գործատուի նախնական գրավոր համաձայնության կատարել այլ վճարովի աշխատանք, բացի սույն հավելվածի 11.1 կետով նախատեսված դեպքերից:

11.1. Գործատուի նախնական համաձայնություն չի պահանջվում Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման հետ չկապված գիտական, մանկավարժական և (կամ) ստեղծագործական (վճարովի հիմունքներով) աշխատանք կատարելու համար:

11.2. Պայմանագիրը կնքելու պահին Աշխատողը պարտավոր է Գործատուին տեղեկացնել երրորդ անձանց հետ ունեցած՝ Պայմանագիրը կնքելու պահի դրությամբ շարունակվող աշխատանքային հարաբերությունների և (կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման վերաբերյալ քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների մասին՝ բացահայտելով դրանց հետ կապված՝ Գործատուին հետաքրքրող և երրորդ անձանց հետ կնքված համապատասխան պայմանագրերի համաձայն անձնական, մասնագիտական, պետական, առևտրային կամ ծառայողական գաղտնիք չհանդիսացող տեղեկատվությունը:

11.3. Աշխատողը պարտավոր է Գործատուին նախապես տեղեկացնել երրորդ անձանց օգտին անվճար հիմունքներով կատարվող աշխատանքների մասին՝ նշելով այդ աշխատանքների բնույթը և տևողությունը:

12. Աշխատողը ընդունում, հաստատում և աներկբա համաձայնվում է, որ Աշխատողի կողմից երրորդ անձանց առջև ստանձնած (ունեցած) պարտավորությունների կամ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կամ գործողությունների կատարումը (այդ թվում՝ սակայն չսահմանափակվելով, Գործատուի նախնական գրավոր համաձայնությամբ կամ սույն հավելվածի 11.1-11.3 կետերով նախատեսված դեպքերում)՝ որևէ պարագայում չպետք է խոչընդոտի Աշխատողի՝ Պայմանագրի համաձայն ստանձնած պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը:

13. Պայմանագրով նախատեսված իր Աշխատանքային (ծառայողական) գործառույթներն ու պարտականությունները Աշխատողը կատարում է անձամբ:

14. Գործատուի առջև ծագած հարցերի ու խնդիրների արդյունավետ լուծման, ինչպես նաև Գործատուի ծրագրերի ու պլանների պատշաճ իրականացման նպատակով Գործատուն կարող է՝

14.1. փոփոխել Աշխատողի աշխատանքի հիմնական վայրը՝ Աշխատողի համար աշխատանքի նոր վայրում ապահովելով աշխատանքի և կեցության ընդունելի պայմաններ և հատուցելով Աշխատողի՝ համապատասխան տեղափոխության հետ կապված նպատակային ծախսերը: Հնարավոր տարընթերցումից խուսափելու նպատակով Կողմերը հաստատում են, որ Պայմանագրով հիմնական տեքստով սահմանված՝ Աշխատողի աշխատանքի վայր հանդիսացող **համայնքի վարչական տարածքում** Աշխատողի աշխատանքի հիմնական վայրի (տեղաբաշխման տարածքի) փոփոխությունը Պայմանագրի իմաստով Աշխատողի աշխատանքի հիմնական վայրի փոփոխություն **չի համարվում**:

14.2. փոփոխել Աշխատողի աշխատանքի այլ էական պայմանները (այդ թվում՝ Աշխատողի աշխատանքային գործառույթներն ու պարտականությունները, Աշխատողի պաշտոնը)՝ սահմանելով նոր պայմաններ:

14.3. Եթե սույն հավելվածի 14.1 և 14.2 կետերով սահմանված դեպքերում Աշխատողը չի տվել իր գրավոր համաձայնությունը աշխատանքը նոր վայրում կամ նոր (փոփոխված) պայմաններով շարունակելու համար կամ հրաժարվել է Աշխատանքը փոփոխված պայմաններով շարունակելուց, ապա Պայմանագիրը լուծվում է՝ Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով ու պայմաններով:

15. Պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունները, այդ թվում՝ Գործատուի հանձնարարությունները կատարելու նպատակով Աշխատողը կարող է գործուղվել այլ վայր՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով ծախսերի վճարմամբ (հատուցմամբ):

15.1. Գործուղումից անհարգելի պատճառներով հրաժարվելը Պայմանագրի իմաստով հանդիսանում է Աշխատողի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումից հրաժարում, ինչը Պայմանագրի լուծման հիմք է:

15.2. Հնարավոր տարընթերցումից խուսափելու նպատակով Կողմերը հաստատում են, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքային պարտականությունները, այդ թվում՝ Գործատուի հանձնարարությունները, կատարելու նպատակով Պայմանագրով հիմնական տեքստով սահմանված՝ Աշխատողի աշխատանքի վայր հանդիսացող համայնքի վարչական տարածքում այլ տարածք (վայր) գործուղվելու դեպքում Գործատուի կողմից Աշխատողի հնարավոր ծախսերի վճարում (հատուցում) չի կատարվում:

16. Աշխատողն իրավունք չունի (Աշխատողին արգելվում է) իր աշխատանքի վայրում զբաղվել իր Աշխատանքային (ծառայողական) գործառույթների ու պարտականությունների հետ չկապված ցանկացած գործունեությամբ, բացառությամբ Գործատուի հատուկ (ժամանակավոր կամ մշտական) հանձնարարությունների:

17. Աշխատողի կողմից իր աշխատանքի վայրում Աշխատանքային (ծառայողական) պարտականությունների հետ չկապված, ինչպես նաև երրորդ անձանց օգտին որևէ աշխատանք (գործողություն) կատարելու կամ երրորդ անձանց օգտին այլ գործունեություն ծավալելու դեպքում Գործատուն իրավունք ունի անհապաղ՝ հայտնաբերելուն պես, դադարեցնել Աշխատողի աշխատանքը, Աշխատողին դուրս հրավիրել նրա աշխատանքի վայրից և առանց նախնական ծանուցման լուծել Պայմանագիրը՝ Աշխատողին ազատելով աշխատանքից:

III. Պայմանագրի լուծումը

18. Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ Պայմանագրով (ներառյալ՝ Պայմանագրի հավելվածները) և (կամ) Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

IV. Աշխատողի աշխատանքի վարձատրությանը (աշխատավարձին) վերաբերող այլ դրույթներ

19. Պայմանագրով նախատեսված աշխատանքները Աշխատողի կողմից փաստացի կատարելու համար Աշխատողին վճարվող Աշխատավարձը կախված է Աշխատողի որակավորումից, Աշխատողին հանձնարարվող աշխատանքի բարդությունից, ծավալից (քանակից), պահանջվող որակից և այլ պայմաններից:

20. Պայմանագրի շրջանակներում Աշխատողին Աշխատավարձ վճարվում է ըստ օրացուցային ամիսների՝ կոնկրետ օրացուցային ամսվա ընթացքում Աշխատողի կատարած աշխատանքների դիմաց:

21. Պայմանագրի շրջանակներում Աշխատողին վճարվող Աշխատավարձը որոշվում (հաշվարկվում) է Պայմանագրի հիմնական տեքստի 5-րդ կետում նշված ձևով՝ համապատասխանաբար ըստ *ժամային*, կամ *օրական*, կամ *ամսական* կամ *գործավարձային* դրույքի (դրույքաչափի):

21.1. Աշխատողի Աշխատավարձի դրույքը (դրույքաչափը) հաստատվում է Գործատուի կողմից՝ Գործատուի ներքին իրավական ակտով, հաշվի առնելով Աշխատողին հանձնարարվող աշխատանքի կատարման առանձնահատկությունները, դրա բարդությունը, ծավալը (քանակը), պահանջվող որակը և այլ պայմանները, Գործատուի գործունեության արդյունավետությունը, Աշխատողի՝ որպես մասնագետի, որակավորումն ու աշխատանքի շուկայում առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը:

21.2. Աշխատողի Աշխատավարձի դրույքը (դրույքաչափը) ներառում է Պայմանագրի համաձայն Աշխատողին վճարվող Հիմնական աշխատավարձը և Աշխատողին վճարվող Լրացուցիչ աշխատավարձը՝ Հավելումները, Հավելավճարները, Պարգևատրումները և Լրավճարները:

21.3. Աշխատողի Աշխատավարձի դրույքի (դրույքաչափի) մեջ ներառվող՝ Աշխատանքային օրենսդրությանը համապատասխան սահմանված՝ ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար Հավելումների չափերը ամրագրվում են Գործատուի ներքին իրավական ակտով (հրամանով) հաստատվող հաստիքացուցակով:

22. Աշխատողի Աշխատավարձի բաղադրատարր հանդիսացող Հիմնական աշխատավարձի չափը սահմանված է Պայմանագրի հիմնական տեքստի 5-րդ կետում:

22.1. Աշխատողին վճարվող Հիմնական աշխատավարձը ներառում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու համար Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված Հավելումը՝ 0 %:

23. Գործատուն իրավունք ունի իր ներքին իրավական ակտով (հրամանով) հաստատվող հաստիքացուցակում կատարվող փոփոխությունների միջոցով միակողմանիորեն ավելացնել Աշխատողի Աշխատավարձի դրույքը (դրույքաչափը) և (կամ) դրա կազմի մեջ մտնող Հիմնական աշխատավարձի և (կամ) Լրացուցիչ աշխատավարձի չափերը:

24. Աշխատողի Աշխատավարձը վճարվում է (աշխատանքի վարձատրությունը կատարվում է) միայն Աշխատողի կողմից փաստացի կատարած աշխատանքների դիմաց:

24.1. Աշխատողի մեղքով խոտան արտադրանքի դեպքում Աշխատողի աշխատանքը Գործատուի կողմից չի վարձատրվում:

24.1.1. Պայմանագրի իմաստով Աշխատողի մեղքով խոտան արտադրանք է համարվում Աշխատողի կողմից՝ իր մեղքով, Պայմանագրով, ներառյալ Աշխատողի Աշխատանքային (ծառայողական) գործառույթներով, ինչպես նաև Գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով նախատեսված՝ Աշխատողի աշխատանքի արդյունքի համար ծրագրային, պլանային կամ այլ եղանակով չափելի ցուցանիշներ առաջադրող կամ ենթադրող աշխատանքային պարտականությունները կամ Գործատուի Հանձնարարությունները կամ կարգադրությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կամ թերի կատարելը, որի հետևանքով (արդյունքում) Գործատուն՝ իր գործունեության համապատասխան ոլորտում, չի ապահովել հաշվետու ժամանակահատվածների համար ծրագրային (պլանային), ֆինանսական կամ այլ ցուցանիշները:

24.1.2. Աշխատողի մեղքով խոտան արտադրանքի դեպքում Գործատուն իրավունք ունի՝ իր ընտրությամբ, վարձատրություն իրականացնել նվազեցված չափով՝ կախված արտադրանքի պիտանիության աստիճանից:

24.2. Աշխատողի կողմից՝ իր մեղքով, աշխատանքի նորմաները չկատարելու դեպքում Աշխատողի կատարած աշխատանքը վարձատրվում է փաստացի կատարված աշխատանքին համապատասխան:

24.2.1. Գործատուն պարտավոր է ապահովել Աշխատողի համար աշխատանքային ցուցանիշների, նորմերի, պլանների և ծրագրերի մշակումը, ինչպես նաև Գործատուի ներքին իրավական ակտերով դրանց հաստատումն ու Աշխատողին տրամադրումը կամ դրանց հետ Աշխատողի ծանոթացումը:

24.2.2. Աշխատողի կողմից՝ ոչ Աշխատողի մեղքով, աշխատանքի նորմաները չկատարելու դեպքում Աշխատողի կատարած աշխատանքը վարձատրվում է փաստացի կատարված աշխատանքի համար: Սույն կետով նախատեսված դեպքում հաշվետու ամսվա համար Աշխատողին վճարվող Աշխատավարձը չի կարող պակաս լինել նրա միջին ամսական աշխատավարձի երկու երրորդից, որն իր հերթին չի կարող պակաս լինել սույն հավելվածի 28-րդ կետով սահմանված չափից:

24.3. Աշխատանքային օրենսդրությամբ և (կամ) Պայմանագրով կամ Կողմերի համաձայնությամբ սահմանված ոչ լրիվ աշխատաժամանակի (ոչ լրիվ աշխատանքային օր կամ շաբաթ) կիրառման դեպքերում, Աշխատողի աշխատանքը վարձատրվում է փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան:

25. Աշխատողի արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքի, ինչպես նաև տոնական, հիշատակի ու հանգստյան օրերին կատարած աշխատանքի դիմաց վարձատրությունը կատարվում է Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափերով, եթե Պայմանագրով չի նախատեսվել ավելի մեծ չափով Հավելում վճարելու պայման:

26. Աշխատավարձը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար մինչև հաջորդող ամսվա 15-ը:

27. Աշխատավարձի վճարման ուշացման դեպքում Գործատուն հաշվարկում և վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար Աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

28. Գործատուի կողմից Աշխատողին վճարվող Աշխատավարձը չի կարող պակաս լինել Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափից:

29. Աշխատավարձի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արժույթով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

30. Աշխատավարձի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Աշխատողի նշած բանկային հաշվին փոխանցելու (վճարելու) եղանակով:

31. Մինչև Աշխատավարձի փաստացի վճարումը Գործատուն Աշխատողին է ներկայացնում համապատասխան հաշվարկային թերթիկ, որտեղ նշվում է փաստացի հաշվարկված Աշխատավարձի հաշվարկը, ներառյալ՝ Հիմնական աշխատավարձը, Լրացուցիչ աշխատավարձը՝ ըստ դրա տեսակների, Աշխատավարձից կատարվող նվազեցումները, ներառյալ՝ Գործատուի՝ որպես հարկային գործակալի, կողմից պահված գումարները և Աշխատողին առձեռն վճարվող գումարի չափը:

32. Աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկությունները հանդիսանում են առևտրային գաղտնիք և առանց Գործատուի գրավոր համաձայնության Աշխատողի կողմից հրապարակման ենթակա չեն:

33. Աշխատողին արգելվում է Գործատուի այլ աշխատողների կամ այլ անձանց հետ քննարկել Պայմանագրով սահմանված աշխատանքի վարձատրության կարգին վերաբերող տեղեկությունները: Նման հարցեր Աշխատողը կարող է քննարկել միայն Գործատուի ղեկավարի կամ Գործատուի՝ համապատասխան լիազորություններով օժտված ներկայացուցչի (Գործատուի պաշտոնատար անձի) հետ:

34. Աշխատողի կողմից հայտարարված գործադուլի կամ այլ աշխատողների կողմից հայտարարված գործադուլին Աշխատողի մասնակցության կամ Աշխատողի՝ աշխատատեղում գտնվելով աշխատանքային պարտականությունները դիտավորյալ չկատարելու (այդ թվում՝ առանց գործադուլ հայտարարելու) ժամանակահատվածների համար Գործատուն Աշխատավարձ չի վճարում:

35. Արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքի (այդ թվում՝ անհաղթահարելի ուժի) հետևանքով առաջացած իրավիճակներում, երբ Աշխատողը չի կարող իրականացնել իր աշխատանքային պարտականությունները կամ Գործատուն չի կարող Աշխատողի համար ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, դրանց ամբողջ ժամանակահատվածի համար Գործատուն Աշխատավարձ չի վճարում:

36. Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար Գործատուն Աշխատավարձ չի վճարում:

V. Աշխատաժամանակ և հանգստի ժամանակ

37. Աշխատողի համար սահմանված է 40 ժամ տևողությամբ 5-օրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Հանգստյան օրերն են՝ շաբաթը և կիրակին:

38. Աշխատանքային օրվա ընթացքում Աշխատողի համար երաշխավորվում է համապատասխան ընդմիջման իրավունքի իրականացումը՝ Գործատուի կողմից սահմանված կարգով:

39. Աշխատողի համար երաշխավորվում է նաև օրվա և շաբաթվա ընթացքում անընդմեջ հանգստի տևողությունը՝ Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով:

40. Անհրաժեշտությունից ելնելով Աշխատողը կարող է աշխատանքի հրավիրվել նաև հանգստյան օրերին՝ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով այլ հանգստյան օրերի տրամադրմամբ: Աշխատողի ցանկությամբ այդ օրերը կարող են ավելացվել նրա ամենամյա արձակուրդին: Սույն կետով սահմանված կանոնը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ հանգստյան ու ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերին Աշխատողի աշխատանքը նախատեսված է Գործատուի կողմից հաստատված աշխատանքի ժամանակացույցով:

41. Հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու նպատակով Աշխատողին տրամադրվում է աշխատանքային օրերով հաշվարկվող ամենամյա **նվազագույն** արձակուրդ՝ ոչ պակաս քան **20 (քսան)** աշխատանքային օր տևողությամբ:

42. Ամենամյա արձակուրդի ընթացքում պահպանվում է Աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

43. Պայմանագրի գործողության ընթացքում Աշխատողին հասանելիք արձակուրդը տրամադրվում է Գործատուի կողմից սահմանված գրաֆիկով, որը, նման հնարավորության դեպքում, կարող է համաձայնեցվել Աշխատողի հետ:

43.1. Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով, ընդ որում արձակուրդի առնվազն մեկ մասի տևողությունը չի կարող պակաս լինել 10 (տասը) աշխատանքային օրից:

44. Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում Աշխատողին տրամադրվում է ինչպես լրացուցիչ, այնպես էլ նպատակային արձակուրդ՝ Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված օրերի քանակով:

44.1. Լրացուցիչ արձակուրդը տրամադրվում է հիմնական արձակուրդի հետ միասին:

VI. Գերակայության սկզբունքի կիրառումը: Վստահության կորուստ

45. Աշխատողը պարտավոր է Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում ապահովել Գերակայության սկզբունքի կիրառումը՝ սեփական (անձնական) շահերը ստորադասելով Գործատուի շահերին: Աշխատողը պարտավորվում է իր գործողություններով թույլ չտալ Գերակայության սկզբունքով նախատեսված՝ Գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձի վարքի հիմնական մոդելի խախտում:

46. Գործատուի մոտ Աշխատողի նկատմամբ Վստահության կորստի դեպքում Գործատուն իրավունք ունի լուծել Պայմանագիրը և արգելել Աշխատողի հետագա աշխատանքը:

47. Մասնավորապես, Վստահության կորուստն առկա է, եթե Աշխատողը՝

47.1. կատարել է այնպիսի արարք, որի հետևանքով Գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս, այդ թվում (սակայն չսահմանափակվելով)՝

47.2. դիտավորությամբ կամ անզգուշությամբ, գործողությամբ կամ անգործությամբ, փչացրել կամ վնասել կամ կորցրել է Գործատուի կողմից իրեն վստահված գույքը (այդ թվում՝ սարքերը, սարքավորումները, տեխնիկական միջոցները, և այլն), կամ թույլ է տվել այդ գույքը դուրս գա Գործատուի վերահսկողությունից, կամ առաջացրել է Գործատուի գույքի հափշտակության կամ այլ հանցավոր եղանակով այլ անձի տիրապետության անցնելու ռիսկ.

47.3. դիտավորությամբ կամ անզգուշությամբ, գործողությամբ կամ անգործությամբ, փչացրել կամ վնասել է Գործատուի այլ գույքը, կամ թույլ է տվել, որ Գործատուի գույքը դուրս գա Գործատուի վերահսկողությունից.

47.4. դիտավորությամբ կամ անզգուշությամբ, գործողությամբ կամ անգործությամբ, Գործատուի գույքի պահպանությունը դրել է վտանգի տակ.

47.5. աշխատանքի վայրում կատարել է Գործատուին կամ Գործատուի հետ աշխատանքային կամ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող անձին պատկանող գույքի հափշտակություն.

47.6. անվստահություն է առաջացրել Գործատուի հետ գործնական կամ առևտրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց (այդ թվում՝ սպառողների, հաճախորդների կամ Գործատուի այլ գործընկերների) մոտ, որի հետևանքով Գործատուն կրել է կամ կարող էր կրել վնասներ.

47.7. կատարել է Գործատուի ներքին իրավական ակտով հաստատված՝ ***Խարդախության դեմ պայքարի և շահերի բախումը բացառելու քաղաքականության*** պահանջների խախտում.

47.8. կատարել է Գործատուի ներքին իրավական ակտով հաստատված՝ ***Ռիսկերի կառավարման քաղաքականության*** պահանջների խախտում.

47.9. իր և (կամ) երրորդ անձանց համար անօրինական եկամուտներ ստանալու և (կամ) այլ անձնական դրդապատճառներով օգտագործել է իր պաշտոնեական դիրքը կամ Գործատուի կողմից իրեն վերապահված լիազորությունները և (կամ) կամայականություն է դրսևորել.

47.10. հրապարակել է առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը կամ թույլ է տվել Գործատուի ներքին իրավական ակտով հաստատված՝ ***Ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող կամ պարունակող կամ այլ հիմքով գաղտնի համարվող տեղեկությունների չհրապարակման վերաբերյալ հրահանգի*** պայմանների խախտում.

47.11. չի պահպանել (խախտել է) աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների պահանջները, որն առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ՝ վտանգելով անձանց կյանքն ու առողջությունը կամ իրական սպառնալիք ստեղծելով անձանց կյանքի և առողջության համար կամ նրանց կյանքին ու առողջությանը պատճառելով վնաս.

47.12. անօրինական (առանց համաձայնեցման կամ տեղեկացման) օգտագործել է Գործատուի կամ այլ աշխատողների համակարգչային տեխնիկան կամ տեղեկատվական համակարգերը (տեղեկատվական համակարգեր մուտք գործելու միջոցներ (մուտքանուն, գաղտնաբառ և այլն)).

47.13. անհարգելի պատճառներով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում չի ներկայացել աշխատանքի.

47.14. աշխատավայրում գտնվել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ.

47.15. աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացրել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ.

47.16. հրաժարվել կամ խուսափել է պարտադիր բժշկական զննությունից (ինչպես նախնական, այնպես էլ պարբերական, հերթական կամ ընթացիկ).

47.17. առանց հարգելի պատճառի պարբերաբար չի կատարում Պայմանագրով, Աշխատողի Աշխատանքային (ծառայողական) գործառույթներով կամ Գործատուի ներքին իրավական ակտերով հաստատված Ներքին կարգապահական կանոններով վերապահված պարտականությունները.

VII. Պայմանագրի փոփոխումը և աշխատանքային վեճերի լուծումը

48. Պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել Կողմերի լրացուցիչ (փոխադարձ) համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով սահմանված դեպքերի:

49. Աշխատողի փոխադրումն այլ աշխատանքի կատարվում է սույն հավելվածի 10-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ Պայմանագրում փոփոխություններ կատարելու միջոցով:

50. Եթե Պայմանագիրը կնքելուց հետո կատարվել են Աշխատանքային օրենսդրության փոփոխություններ (ընդունվել է նոր օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ), որոնցով Կողմերի համար սահմանում են այնպիսի պարտադիր կանոններ, որոնք տարբերվում են Պայմանագիրը կնքելիս գործող կանոններից, ապա Պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված է, որ դրանց գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

51. Եթե Պայմանագիրը կնքելուց հետո կատարված՝ Աշխատանքային օրենսդրության փոփոխությունների արդյունքում Կողմերի հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը էականորեն ազդում են Պայմանագիրը կնքելիս Կողմերի իրական կամքի արտահայտման եղանակների վրա կամ այլ հիմքով կարիք են առաջացնում վերաձևակերպել Պայմանագրով սահմանված պայմանները, ապա Կողմերը անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն սեղմ ժամկետներում Պայմանագրում կամ Պայմանագրի հավելվածներում համապատասխան փոփոխություններ կատարելու և Կողմերի իրական մտադրություններն ու կամքը փոփոխված Աշխատանքային օրենսդրության իմպերատիվ նորմերին համապատասխանեցնելու համար:

52. Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման ժամանակ Կողմերի միջև աշխատանքային վեճի առաջացման դեպքում այն կարող է կարգավորվել Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ նման եղանակով չլուծվելու դեպքում՝ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. Եզրափակիչ դրույթներ

53. Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարմանն Աշխատողի անցնելուց առաջ Գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է Աշխատողին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), Պայմանագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող փաստաթղթերի, այդ թվում՝ Գործատուի ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող Գործատուի այլ ներքին իրավական ակտերին, բացառությամբ սույն հավելվածով նախատեսված դեպքի:

53.1. Եթե Պայմանագիրը կնքելու պահին Աշխատողը փաստացի աշխատում է և իրականացնում է Պայմանագրով նախատեսված իր գործառույթները, ապա Գործա-

տուի կողմից Աշխատողի աշխատանքի պայմանների և Գործատուի այլ փաստաթղթերի հետ ծանոթացում չի կատարվում:

54. Աշխատողը պարտավոր է Պայմանագրով նախատեսված օրն անցնել աշխատանքի: Նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է Պայմանագրի լուծման համար:

55. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից լուծված է համարվում (դադարում է գործել) Աշխատողի հետ նախկինում կնքված գրավոր աշխատանքային պայմանագիրը (առկայության դեպքում):

55.1. Նախկինում կնքված աշխատանքային պայմանագրի լուծման (դադարման) պահից, ինչպես նաև եթե Գործատուի և Աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունները ձևավորված են Աշխատանքային օրենսդրության նախկինում գործող խմբագրությամբ թույատրված եղանակով՝ Աշխատողին աշխատանքի ընդունման մասին Գործատուի անհատական իրավական ակտի հիման վրա, ապա Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից համապատասխան աշխատանքային հարաբերությունները շարունակվում են Պայմանագրով նախատեսված կարգով ու պայմաններով:

56. Պայմանագրի բաղկացուցիչ մասը կազմող՝ Գործատուի ներքին իրավական ակտով (ակտերով) հաստատված և Պայմանագրի հավելված հանդիսացող ներքին փաստաթղթերը կարող են փոփոխվել և (կամ) լրացվել Գործատուի համապատասխան իրավասություններով օժտված մարմնի կողմից ընդունվող ներքին իրավական ակտով (այդ թվում՝ հրամանով)՝ պահպանելով դրանք ուժի մեջ մտնելու համար Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը:

56.1. Պայմանագրի Հավելվածների բոլոր փոփոխություններն ու լրացումները կցվում են համապատասխան Հավելվածներին և հանդիսանում են դրանց բաղկացուցիչ մասը:

56.2. Պայմանագրի Հավելվածների բոլոր փոփոխությունները և (կամ) լրացումներն Աշխատողի նկատմամբ կիրառելի են (ուժի մեջ են մտնում) այդ փոփոխությունների և (կամ) լրացումների հետ ծանոթանալու պայմանով, որը կատարվում է սույն հավելվածի 60-րդ կետով նախատեսված կարգով:

57. Գործատուն և Աշխատողը պարտավոր են ապահովել Պայմանագրի հիմնական տեքստում նշված հաղորդակցության միջոցների (էլեկտրոնային և փոստային հասցեների) մշտական հասանելիությունը և կրում են այդ պարտականությունը խախտելու բացասական հետևանքները:

58. Ի լրումն Պայմանագրի հիմնական տեքստում նշված էլեկտրոնային փոստի հասցեի, Աշխատողը պարտավոր է Պայմանագիրը կնքելու պահին Գործատուին տրամադրել իր հետ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի այլընտրանքային միջոցների (էլեկտրոնային փոստի կամ թվային այլ տեխնոլոգիաների գործադրմամբ աշխատող կապի այլ միջոցներ, ներառյալ՝ սոցիալական ցանցերը, հեռախոսային կապի հավելվածները, թվային հաղորդակցությունն ապահովող այլ միջոցները) վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում (սակայն չսահմանափակվելով)՝ անձնական էլեկտրոնային փոստի հասցեները, սոցիալական ցանցերի կամ հեռախոսային հավելվածների տվյալները կամ գործող հեռախոսահամարները: Աշխատողը նաև պարտավոր է ապահովել սույն կետի համաձայն Գործատուին տրամադրված հաղորդակցության միջոցների մշտական հասանելիությունը և կրում է այդ պարտականությունը խախտելու բացասական հետևանքները:

59. Կողմերը պարտավոր են միմյանց անմիջապես տեղյակ պահել Պայմանագրի հիմնական տեքստում իրենց վերաբերյալ առկա, իսկ Աշխատողը նաև՝ սույն հավելվածի 58-րդ կետով սահմանված կարգով Աշխատողի կողմից Գործատուին տրամադրված, որևէ տվյալի փոփոխության մասին և կրում են այդ պարտականությունը խախտելու բացասական հետևանքները:

60. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև իրականացվող հաղորդակցությունը, այդ թվում (սակայն չսահմանափակվելով)՝ բոլոր տեսակի փոխադարձ ծանուցումները, ծանուցագրերը, տեղեկացումները և իրազեկումները, Կողմերը կատարում են էլեկտրոնային եղանակով՝ Պայմանագրի հիմնական տեքստում նշված էլեկտրոնային փոստի հասցեով առաքման եղանակով կամ առձեռն՝ ստանալու վերաբերյալ ստորագրությամբ:

60.1. Աշխատողին հասցեագրված ծանուցումները, ծանուցագրերը, տեղեկացումները և իրազեկումները կարող են Աշխատողին առաքվել նաև սույն հավելվածի 58-րդ կետով սահմանված կարգով Աշխատողի կողմից Գործատուին տրամադրված՝ իր հետ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի այլ միջոցով:

60.2. Պայմանագրի որևէ Կողմի պատշաճ ծանուցումը համարվում է ապահովված, եթե վերջինիս ծանուցումը կատարվել է Պայմանագրի հիմնական տեքստում նշված էլեկտրոնային փոստի կամ սույն հավելվածի 58-րդ կետով սահմանված կարգով Աշխատողի կողմից Գործատուին տրամադրված՝ իր հետ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի որևէ (թեկուզև մեկ) եղանակով (հասցեով, կապի միջոցով, սոցիալական ցանցի օգտահաշվով, հեռախոսային կապի հավելվածով):

60.3. Կողմերի՝ միմյանց ուղարկված բոլոր տեսակի ծանուցումները Պայմանագրի հիմնական տեքստում նշված էլեկտրոնային փոստի կամ սույն հավելվածի 58-րդ կետով սահմանված կարգով Աշխատողի կողմից Գործատուին տրամադրված՝ իր հետ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի որևէ միջոցով (եղանակով) կատարելու (առաքելու) դեպքում համարվում է, որ հասցեատերն այն ստացել է համապատասխան ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող 2-րդ (երկրորդ) աշխատանքային օրը, եթե ծանուցումն ուղարկողն ավելի վաղ չի տեղեկացվել ծանուցումը հասցեատիրոջ կողմից ստանալու կամ կարդալու մասին:

61. Պայմանագրի հիմնական տեքստով ու սույն հավելվածով նախատեսված և Պայմանագրի այլ հավելվածներով նախատեսված պայմանների միջև հնարավոր հակասությունների կամ անհամապատասխանությունների առաջացման դեպքում գերակայում են Պայմանագրի հիմնական տեքստով ու սույն հավելվածով նախատեսված պայմանները:

62. Կողմերը հաստատում են, որ Պայմանագրի պայմանները փոխադարձ ընդունելի են և ամբողջությամբ համապատասխանում են Կողմերի իրական մտադրություններին:

63. Պայմանագիրը ստորագրելով Աշխատողը հաստատում է, որ ինքը ՝

63.1. ամբողջությամբ ծանոթացել է Պայմանագրի բաղկացուցիչ մասը կազմող բոլոր հավելվածներին, որոնց պատճենները Աշխատողին առաքվել են կամ որոնց թվային (էլեկտրոնային) զետեղարաններին կատարված հղումները Աշխատողին տրամադրվել են Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի միջոցով:

63.2. տվել է (տալիս է) իր համաձայնությունը Գործատուի կողմից իր (Աշխատողի) անձնական տվյալների մշակման (հավաքելու, ամրագրելու, մուտքագրելու, փոխանցելու, պահպանելու և օգտագործելու) համար, որը Գործատուի կողմից կատարվում է համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի: Աշխատողի կողմից սույն կետի համաձայն տրված համաձայնությունը վերաբերում (ներառում) է նաև Աշխատողի անձնական տվյալները երրորդ անձից ստանալու դեպքերին և Գործատուն իրավունք ունի երրորդ անձից ստանալ Աշխատողի անձնական տվյալները՝ առանց Աշխատողի լրացուցիչ գրավոր համաձայնության:

64. Պայմանագրի պայմանների փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով և (կամ) Աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

64.1. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կատարված են Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

65. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Պայմանագրի բոլոր հավելվածները (այդ թվում՝ սույն հավելվածի 56-րդ կետի համաձայն փոփոխված խմբագրությամբ), կցվում են Պայմանագրին և հանդիսանում են Պայմանագրի բաղկացուցիչ մասը:

66. Կողմերի միջև Պայմանագրի կնքման և գործողության ընթացքում առաջացող բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել Պայմանագրի (ներառյալ՝ Պայմանագրի հավելվածները) դրույթներով, կարգավորվում են Օրենսդրությամբ սահմանված կարգով: